ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԼԻԴԻԱՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ 3-02 / ԳՆԴԵՎԱԶ, ՀԱՅԱՍՏԱՆ

Տվյալ հաշվետվության մեջ ամփոփված է Հայաստանում ՄՖԿ-ի աջակցությամբ իրականացվող Լիդիան Ինթերնեյշնլ 3 ծրագիր (# 27657) ՀԱՊ վեճերի լուծման գործընթացը

ՆԿԱՐԱԳԻՐ

ՄՖԿ-ի ծրագիր

Ըստ ՄՖԿ-ի՝ Լիդիան ինթերնեյշնլը (հետայսու՝Լիդիան) հանքարդյունա-բերական ընկերություն է, որի գործունեությունը հիմնականում ուղղված է Արեւելյան Եվրոպայում եւ Կենտրոնական Ասիայում հետազոտական ծրագրերի իրականացմանը: Լիդիանը իրեն ամբողջությամբ պատկանող անուղղակի դուստր ընկերության՝ Գեոթիմ ՓԲԸ-ի միջոցով տիրապետում է Հայստանում գտնվող Ամուլսարի ոսկու հանքի հետազոտման արտոնագրին: Ամուլսարը գտնվում է Հայաստանի կենտրոնական մասում՝ Երեւանից մոտ 120կմ դեպի հարավ: Ծրագիրը ներկայումս գտնվում է իրագործելիության առաջընթաց փուլում:
2014թ.-ի հոկտեմբերին ընկերությունը ավարտել է բանկի կողմից ընդունելի Իրագործելիության Ուսումնասիրությունը (ԻՈՒ)[1] և 2015թ.-ի մայիսին՝ Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ): Զուգահեռաբար՝ 2014թ.-ի հոկտեմբեր ամսին, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից, ՀՀ գործող օրենքների պահանջներին համապատասխան, հաստատվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ), իսկ հաջորդ ամսին ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից շնորհվել է հանքի շահագործման իրավունք: Ակնկալվում է, որ ծրագիրը կմտնի շինարարության փուլ 2016թ.-ի սկզբին: Ոսկու արտադրության մեկնարկը նախատեսվում է 2017թ.-ի սկզբին:

Բողոքը

Բողոքը ՀԱՊ-ին է ներկայացվել Վայոց Ձոր մարզի Գնդեվազ համայնքի 148 բնակիչների կողմից 2014թ.-ի հուլիսին: Բողոքում բնակիչները բարձրաձայնել են իրենց մտահոգությունները շրջակա միջավայրի, համայնքի կենսա-ապահովման և առողջության վրա ծրագրի ազդեցության վերաբերյալ: Մասնավորապես բողոքում շեշտը դրվում է ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության բացակայության (մասնավորապես՝ հողի օտարման եւ վերաբնակեցման ծրագրերի վերաբերյալ), ցիանիդի տարրալվացման համակարգի

[1] «բանկի կողմից ընդունելի Իրագործելիության Ուսումնասիրությունը» - առաջարկվող հանքարդյունաբերական ծրագրի գնահատումն է՝ հանքային պաշարների արդյունահանման տնտեսական շահավետությունը որոշելու համար:

շահագործումից առաջացած շրջակա միջավայրի պոտենցիալ աղտոտման, դաշտերի, անասունների եւ մշակվող հողատարածքների վրա փոշու ազդեցության, աշխատակիցների և համայնքի առողջական խնդիրների եւ համայնքի ոչ բավարար ներգրավվածության վրա:

2014թ.-ի հոկտեմբերին բողոքարկուները ՀԱՊ-ին տրամադրեցին 62 լրացուցիչ բողոքարկուների ցանկ, որի արդյունքում բողոքարկուների ընդհանուր թիվը կազմեց 210 հոգի: Բողոքն ամբողջությամբ տեղադրված է ՀԱՊ-ի էլեկտրոնային կայքում՝ www.cao-ombudsman.org.

ՀԱՊ թիմը հանդիպում է բողոքարկուի Գնդեվազում՝ Ամուլսար տեղեկատվական կենտրոնի մոտ:

ՀԱՊ-ի գնահատումը

2014թ.-ի օգոստոսին ՀԱՊ-ը որոշում կայացրեց, որ բողոքը համապատասխանում է իր կողմից սահմանված չափանիշներին, և նախաձեռնեց բողոքի գնահատումը: ՀԱՊ-ի կողմից իրականացված գնահատման նպատակն էր՝ հստակեցնել բողոքարկուների կողմից բարձրացված խնդիրներն ու մտահոգությունները, հավաքել տեղեկություններ, պարզել, թե ինչպես են այլ շահագրգիռ կողմեր տեսնում իրավիճակը, եւ հստակեցնել, թե արդյոք կողմերը նախընտրում են նախաձեռնել ՀԱՊ վեճերի լուծման գործընթացը, թե համապատասխանության ապահովման դերը: ՀԱՊ-ի գնահատման գործընթացը չի ներառում բողոքի էության վերաբերյալ որևէ եզրահանգման կայացում:

2014թ.-ի հոկտեմբերին և 2015թ.-ի հունվարին ՀԱՊ-ը երկու այցելություն է ունեցել Հայաստան՝ Երևանում և Գնդեվազում հանդիպելու տարբեր շահագրգիռ կողմերի հետ: ՀԱՊ-ի մանդատի, գործառույթների եւ ծառայությունների մանրակրկիտ քննարկումից հետո բողոքարկուները և Լիդիանը/Գեոթիմը դիմեցին ՀԱՊ-ին՝ իրականացնելու վեճերի լուծման գործընթաց, որը կօգնի համատեղ մոտեցման կիրառմամբ լուծումներ տալ բողոքում բարձրացված խնդիրներին:

ՀԱՊ-ի միջնորդը հանդիպում է համայնքի ներկայացուցիչներին:

Վեճի լուծման գործընթացի արդյունքները

2015թ.-ի փետրվար եւ մարտ ամիսներին ՀԱՊ-ն առանձին հանդիպումներ է ունեցել բողոքարկուների և Լիդիանի հետ, և նրանց հետ միասին մշակել է «Միջնորդության համաձայնագրի» նախագիծը: Համաձայնագիրը նկարագրում էր միջնորդության գործընթացը, ներառում էր միջնորդության նպատակը, միջնորդի և կողմերի դերերերն ու պարտականությունները, գաղտնիության դրույթները և այլն: Միջնորդության համաձայնագիրը չվերջնականացվեց և չստորագրվեց, քանի որ վեճերի կարգավորման գործընթացը նոր էր սկսվել, երբ բողոքարկուների ներկայացուցիչները որոշեցին, որ իրենք չեն ցանկանում հետագայում մասնակցել դրան: Բողոքարկուներից ամենաակտիվ և բողոքները բարձրաձայնող ներկայացուցիչները դեմ էին հանքի շահագործմանը և կարծում էին, որ ընկերության հետ երկխոսությանը կամ բանակցություններին մասնակցությունը իրենց սկզբունքներին դեմ կլինի: Մի քանի համայնքային եւ անհատական հանդիպումներից հետո ՀԱՊ-ն անկարող էր շարունակել վեճերի կարգավորման գործընթացը, քանի որ բողոքարկուները այլեւս չէին ցանկանում մասնակցել դրան: Բողոքարկուների այդ որոշումը ՀԱՊ-ի կողմից հաստատվեց 2015թ.-ի մայիսի 23-ի համայնքային հանդիպման ընթացքում:

Լիդիանի ղեկավարությունը շարունակում է բաց եւ պատրաստակամ մնալ բողոքարկուների հետ երկխոսությանը ուղղակիորեն կամ ընդունելի երրորդ չեզոք կողմի աջակցությամբ:

ՀԱՊ-ի թիմը հանդիպում է Լիդիանի և Գեոթիմի աշխատակիցներին ծրագրի իրականացման վայրում:

Մարտահրավերներն ու քաղված դասերը

Շահագրգիռ կողմերի առաջնահերթություններն ու ներկայացվածությունը հաճախ անկայուն են և փոփոխական:

Որպեսզի համատեղ վեճերի կարգավորման գործընթացը առաջ ընթանա, ընկերությունը և բողոքարկուները պետք է ոչ միայն համաձայնվեն նրան մասնակցել, այլ նաև պետք է որոշեն և ընտրեն գործընթացին մասնակից իրենց համապատասխան ներկայացուցիչներին: ՀԱՊ-ի գործունեության պատմության մեջ բողոքը վեճերի լուծման գործընթաց անցնելուց հետո տարբեր շահագրգիռ կողմերի՝

ընկերությունների, բողոքարկուների, ՀԿ-ների և կառավարության ներկայացուցիչների, և այլոց տեսակետների փոփոխությունը բնական երևույթ է: Շատ գործոններ կարող են նպաստել դրան, այդ թվում՝ նոր տեղեկատվությունը և/կամ խնդիրների և միմյանց նոր ընկալումը, կողմերի միջև բարելավված (կամ վատթարացված) վստահությունն ու հարաբերությունները, շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների փոփոխությունը, արտաքին երևույթներ և այլն:

Տվյալ դեպքում, նախնական փուլում վեճերի լուծման գործընթացին մասնակցելու որոշում կայացնելուց հետո բողոքարկուների ներկայացուցիչները գտան, որ դա այլեւս իրենց շահերից չի բխում:

Ինչպե՞ս հավաստիանալ, որ այս փոփոխությունը արտացոլում է բողոքարկուների ավելի խոշոր խմբի կարծիքը: Սա մարտահրավեր էր ՀԱՊ-ի համար, քանի որ 210 բողոքարկուների ներկայացուցչական կազմը դեռևս հստակեցված չէր:

Այն բողոքարկուները, ում հետ ՀԱՊ-ը կարողացել էր հանդիպել, կարծում էին, որ իրենց խնդիրները կլուծվեն ՀԱՊ-ի համապատասխանության ապահովման գործընթացի և/կամ այլ եղանակով կամ միջոցներով, որ առկա են Հայաստանում: Հետևաբար բողոքարկուները հետագա բանակցությունների կամ երկխոսության անհրաժեշտություն չէին տեսնում:

Երբ շահառուների կարծիքները կամ առաջնահերթությունները փոխվում և զարգանում են, ՀԱՊ-ը ձգտում է կատարել առնվազն երկու քայլ. (1) հասկանալ այդ փոփոխությունները՝ նպատակ ունենալով կողմերին օգնել միմյանց ավելի լավ հասկանալ, և

(2) օգնել կողմերին տեղեկացված որոշումներ կայացնել ՀԱՊ-ի ներգրավվածության վերաբերյալ:

Այս դեպքում ՀԱՊ-ը հանդիպել է հնարավորինս շատ բողոքարկուների հետ և բոլորին հրավիրել է մասնակցել ՀԱՊ-ի կողմից կազմակերպված համայնքային հավաքներին: Ի վերջո, տարբեր այլընտրանքներ քննարկելով և կարծիքներ փոխանակելով, վերջնական համայնքային հանդիպման ժամանակ ՀԱՊ-ը հաստատել է որոշումը, համաձայն որի՝ բողոքարկուների ներկայացուցիչները դուրս են գալիս վեճերի լուծման գործընթացից:

Անհատական պատճառները բազմազան էին. որոշ բողոքարկուներ կարծում էին, որ բանակցությունների համար բավարար վստահություն չունեն, ոմանք վեճերի լուծման վերաբերյալ փոխեցին իրենց դիրքորոշումը, քանի որ նրանց մտահոգությունները հողի ձեռքբերմանն էին ուղղված և իրենք ստացան պատասխաններ, ոմանք պարզապես դեմ էին հանքի շահագործմանը ցանկացած պարագայում, մյուսները անտարբեր էին և չէին կարող կամ չէին ցանկանում հանդիպել ՀԱՊ-ի հետ:

Չնայած ներկայացուցչական կազմի հետ կապված մարտահրավերին՝ ՀԱՊ-ը կարողացավ փարատել իր մտահոգությունը առ այն, որ վեճերի լուծման գործընթացին չմասնակցելու համայնքի ներկայացուցիչների որոշումը համընկնում է բողոքարկուների լայն խմբի որոշման հետ:

ՀԱՊ թիմի հանդիպումը Գնդեվազ գյուղի բնակիչների հետ:

Բոլոր համապատասխան փաստաթղթերը տեղադրված են ՀԱՊ կայքում՝ www.cao-ombudsman.org